Cal OES

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ
ՆԱՀԱՆԳԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ՎՏԱՆԳՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՆԱՀԱՆԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հատոր 1

Հիմնական դրույթներ

Լրամշակված 10 նոյեմբերի, 2023 թ.

Gavin Newsom
Նահանգապետ

Nancy Ward
Արտակարգ իրավիճակների
կառավարման Կալիֆորնիայի
նահանգապետի գրասենյակի տնօրեն

2023թ.

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Կալիֆորնիայի նահանգը ձգտում է ռիսկերի նվազեցման շարունակական ջանքերի միջոցով բոլոր համայնքներում ապահովել ապագա վտանգների նկատմամբ դիմակայունությունը: Լինելով ԱՄՆ բնակչության գրեթե 12 տոկոսի բնակության վայրը՝ Կալիֆորնիան բազմազան է մշակութային, էթնիկական, տնտեսական, էկոլոգիական և քաղաքական առումով: Նահանգը խոցելի է մեծ թվով բնական և տեխնածին բնույթի վտանգների նկատմամբ, որոնք ազդել են և կշարունակեն ազդել նրա բնակչության, գույքի, շրջակա միջավայրի, ենթակառուցվածքների և տնտեսության վրա: 2018 թվականից ի վեր Կալիֆորնիայում (2023 թվականի հունիսի 1-ի դրությամբ) 72 դաշնային աղետի հայտարարություն է գրանցվել, ընդսմին երեք տեսակի (խոշոր աղետ (5), արտակարգ իրավիճակ (13) և հրդեհի կառավարման օգնություն (54)): Հայտարարություններում կան որոշակի կրկնություններ՝ պայմանավորված հրդեհների կառավարման աջակցությամբ և Խոշոր աղետի հայտարարության կարգավիճակի վերածվող Արտակարգ իրավիճակների հայտարարություններով: Այս ժամանակահատվածում եղել են նաև բազմաթիվ նահանգային և տեղական աղետներ: Աղետների տեմպերը և մասշտաբները կշարունակեն աճել կլիմայի փոփոխության հետևանքների պատճառով: Նահանգը շարունակում է ակտիվորեն աշխատել լայն շրջանակի բնական և տեխնածին վտանգների հնարավոր հետևանքների դեմ պայքարելու և համայնքի՝ դիմակայելու կարողություններն ավելացնելու ուղղությամբ:

Աղետների հետևանքների մեղմացման մասին 2000 թվականի ակտով (Disaster Mitigation Act of 2000, DMA) փոփոխություններ են կատարվել Աղետների ժամանակ օգնության և արտակարգ իրավիճակների դեպքում ցուցաբերվող օգնության մասին Ռոբերտ Ստեֆորդի ակտի մեջ՝ ներառելով Բաժին 322-ը, որով պահանջվում է, որ նահանգներն ունենան ռիսկերի նվազեցման ծրագիր, որը հաստատված կլինի Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA) կողմից, որպեսզի հնարավոր լինի ֆինանսավորել աղետների ժամանակ ցուցաբերվող օգնության և վտանգների հետևանքների մեղմացման գործընթացները: Վտանգների հետևանքների մեղմացման ծրագիրը նահանգային ծրագիր է՝ միտված նվազեցնելու ապագա աղետներից կյանքին, գույքին և շրջակա միջավայրին հասցվող վնասը: Կալիֆորնիան ունի Ընդլայնված ծրագիր, որն ապացուցում է նահանգի հանձնառությունը երկարաժամկետ հեռանկարում վտանգների հետևանքների մեղմացմանը և FEMA-ի կողմից տրամադրում է հետևանքների մեղմացման լրացուցիչ ֆինանսավորում Խոշոր աղետների մասին Նախագահի հայտարարությունից հետո: Կալիֆորնիայի Ընդլայնված ծրագիրը ցույց է տալիս, թե նահանգն ինչպիսի մոտեցում է որդեգրել ռիսկերի

նվազեցմանն ուղղված ամբողջական և ինտեգրված ջանքերի նկատմամբ, և ինչ կարողություններ, ռեսուրսներ ու հնարավորություններ ունի նահանգը՝ ռիսկերի արդյունավետ նվազեցման դրամաշնորհային ծրագրերը կառավարելու համար:

Քանի որ համայնքներն ու բնակչությունը շարունակում են աճել և զարգանալ կլիմայի փոփոխության շարունակական հետևանքներին զուգահեռաբար, այն բոլոր վտանգների ռիսկերը, որ ծառանում են Կալիֆորնիայի առաջ, առաջիկա տասնամյակների ընթացքում կավելանան: Սա արդեն իսկ ակնհայտ է եղել առավել ուժեղ և լայնատարած անտառային հրդեհների և հաճախակի գրանցվող ծայրահեղ շոգի օրերին: Այս ռիսկերը մեղմելու և ապագա որոշումների կայացման վերաբերյալ իրազեկելու նպատակով Կալիֆորնիան թարմացնում է իր «Վտանգների հետևանքների մեղմացման ծրագիրը» (SHMP կամ Ծրագիր)՝ արտացոլելու ռիսկերի նվազեցման ինտեգրված, բազմամակարդակ, բազմասեկտորային, համագործակցային մոտեցում, որով ձևավորվում է համայնքի դիմակայունությունը, և որը նպաստում է, որ արդյունքները արդար լինեն: 2023 SHMP-ով որոշարկվում են գիտութենահենք կանխատեսումներով իրազեկվող վտանգները , Կալիֆորնիայի նահանգի աղետների պատմությունը, և թվարկվում են նահանգի նպատակները, խնդիրները, ռազմավարությունն ու գործողությունները՝ ուղղված ապագա ռիսկերի նվազեցմանը: Վտանգների հետևանքների մեղմացման՝ նախապես պլանավորված, իրագործելի և ծախսարդյունավետ միջոցառումների իրականացումը նվազեցնում է մարդկանց կյանքի, գույքի և շրջակա միջավայրի կորուստները և հեշտացնում աղետի հետևանքներից վերականգնողական գործընթացը:

FEMA-ի Վտանգների մեղմացման աջակցության ուղեցույցով վտանգի նվազեցումը սահմանվում է որպես կյանքի և գույքի կորուստների նվազեցման կայուն ջանքեր՝ բնական աղետների, կլիմայական վտանգների և մարդածին սպառնալիքները նվազեցնելով կամ վերացնելով: Այն նպաստում է առավել ապահով համայնքների ձևավորմանը և օգնում է պահպանելու կյանքի որակը: Վտանգների հետևանքների արդյունավետ մեղմացման համար պահանջվում է, որ բոլոր ռիսկերն ընկալվեն, ու կայուն ներդրումներ կատարվեն համայնքի երկարաժամկետ բարեկեցության համար՝ կարճաժամկետ և երկարաժամկետ ռազմավարությունների իրականացման միջոցով՝ նախքան հաջորդ աղետի պատահելը (FEMA 2023j):

SHMP-ով տրվում է Կալիֆորնիայի աղետների պատմության և լանդշաֆտի ընդհանուր պատկերը, ներկայացվում են Արտակարգ իրավիճակների արձագանքման Կալիֆորնիայի նահանգապետի գրասենյակի (Cal OES) վտանգների հետևանքների մեղմացման բաժնի

ջանքերը, որոնք ուղղված են լինում աղետների կորուստների նվազեցմանը, ինչպես նաև նկարագրվում են այն ռազմավարությունները, որոնք օգտագործվում են վտանգների հետևանքների մեղմացման արդյունավետ և համապարփակ նահանգային ծրագիր իրականացնելու համար: Ծրագիրը մշակվել է դաշնային, նահանգային, ցեղային էթնիկ, տեղական և հասարակական շահագրգիռ կողմերի բազմամասնագիտական խմբերի հետ համատեղ, ինչպես նաև հանրության աջակցությամբ: Ծրագրում զետեղված է ռիսկերի նվազեցման գիտութենահենք մի ռազմավարություն, որը միտված է աջակցելու նահանգային և տեղական ինքնակառավարման մարմիններում որոշումների կայացմանը՝ հիմնավորապես խթանելու համայնքների դիմակայունությունը: SHMP-ի լրացուցիչ առավելությունն այն է, որ նա իրավասու է ստանալու դաշնային շարունակական աջակցություն և ինտենսիվ ֆինանսավորում, որոնց նպատակն է աջակցել վտանգի հետևանքների մեղմացման գործողություններին և վերանորոգել կամ փոխարինել դաշնային մակարդակով հայտարարված աղետների ժամանակ վնասված հանրային ենթակառուցվածքները:

Լրամշակված SHMP-ով դրսևորվում է տալիս ռիսկերը և աղետների ազդեցությունը նվազեցնելու կամ վերացնելու՝ նահանգի հանձնառությունը, որի նպատակն է ունենալ աղետների նկատմամբ ավելի դիմացկուն նահանգ, նվազեցնել կորուստները ապագա վտանգների ժամանակ և նպաստել աղետներից հետո ավելի արագ վերականգնվելուն: Բովանդակությունը լրամշակելու և հանրությանը վտանգների հետևանքների մեղմացման շարունակական միջոցառումներում ներգրավված պահելու տեսանկյունից Ծրագիրը կենսունակ փաստաթուղթ է, որը շարունակաբար կթարմացվի՝ համաձայն 48-րդ գլխում նշված Ծրագրի վարման գործընթացի:

2023 թվականի Ծրագիրը Կալիֆորնիայի SHMP-ի հինգերորդ լրամշակված հրապարակումն է: Ծրագիրը օպտիմալացվել է մեծ թվով հանրության կողմից ընթեռնելիությունն ապահովելու համար՝ միաժամանակ պահպանելով համապատասխան մանրամասն վերլուծության և կիրառելի ռազմավարությունները, որոնց նպատակն է նպաստել ապագա Ռիսկերի նվազեցման նահանգային գործողություններին: SHMP-ն տեխնիկական տեղեկությունների աղբյուր է Կալիֆորնիայի վարչաշրջանների, քաղաքների, հատուկ շրջանների, ցեղային էթնիկ հանրույթների և այլ տեղական կառավարությունների համար, որոնք թարմացնում են իրենց վտանգի նվազեցման տեղական ծրագրերը (LHMP): SHMP-ով տրվում է հուսալի, թարմացված ռիսկերի գնահատում, որով փոխկապվում են Կալիֆորնիայի առկա ռեսուրսները լավագույն հասանելի տվյալների և կլիմայագիտության հետ: SHMP-ն կիրականացվի Նահանգի կողմից՝սկսած 2023 թվականին Ծրագրի ընդունումից մինչև 2028 թվականին դրա հաջորդ թարմացումը:

2023 թվականի SHMP-ով ամրագրվում է.

- Կալիֆորնիայի նահանգի հանձնառությունը վտանգների մեղմացման համապարփակ և ինտեգրված ծրագրի իրականացմանը
- Դաշնային, նահանգային, ցեղային էթնիկ հանրույթների և տեղական գործակալությունների ինտեգրումը՝ վտանգների մեղմացնող հնարավորություններին և ընդհանուր նպատակներին, ինչը միտված է նվազեցնելու բնական վտանգների ռիսկերը
- Վտանգի մեղմացման ծրագրերի հաջողությամբ իրականացումը՝ մեղմացման նպատակներին հասնելու համար
- FEMA-ի կողմից պահանջվող դրամաշնորհների կառավարման կատարողական ցուցանիշներին համապատասխանելու՝ Նահանգի կարողությունը՝ ընդլայնված Նահանգային ծրագրի անցկացման համար

2023 թվականի ծրագիրը կազմակերպվել է FEMA-ի Վտանգների մեղմացման պլանավորման նահանգային քաղաքականության ուղեցույցին համապատասխանեցնելու համար: SHMP-ը բաղկացած է հետևյալ մասերից.

- Նախնական տեղեկություններ
- Հետաքրքրություն ներկայացնող բնական վտանգների վերաբերյալ վիճակագրություն և ռիսկերի գնահատում
- Հետաքրքրությունների ներկայացնող այլ վտանգների վերաբերյալ վիճակագրություն
- Վտանգների նվազեցումը տեղական իրավապահ մարմինների համար
- Մեղմացման ռազմավարություն
- Նահանգային ընդլայնված ծրագրի պահանջները
- Հատոր 1-ի հավելվածներ

ՎՏԱՆԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

1950 թվականից ի վեր բնական աղետների ազդեցությունը Կալիֆորնիայի վրա նշանակալի է եղել.

- 365 Արտակարգ իրավիճակների մասին հայտարարություն,
- 337 դաշնային աղետների մասին հայտարարություն (սա ներառում է որոշակի կրկնություններ՝ կապված հրդեհների կառավարման հարցում աջակցության և Խոշոր

աղետի մասին հայտարարության կարգավիճակի վերածվող Արտակարգ իրավիճակների մասին հայտարարություններ),

- Ավելի քան 900 մահ,
- 20,7 միլիարդ դոլարի նահանգային իշխանությունների կողմից վերահսկվող ծախսեր:

SHMP-ի 2018 թվականի լրամշակումից ի վեր՝ նահանգում եղել են 37 Արտակարգ իրավիճակների մասին նահանգային հայտարարություններ և 72 դաշնային մակարդակով հայտարարված աղետներ, որոնց հետևանքով մահացել է առնվազն 185 մարդ և կատարվել է նահանգային իշխանությունների կողմից վերահսկվող 22,8 միլիարդ դոլարի ծախս: Քանի որ կլիման շարունակում է փոխվել, գիտնականներն ապացուցում են, որ աղետների մասշտաբը, տեմպը և ուժգնությունը կշարունակեն աճել, ինչը կհանգեցնի մարդկային տառապանքների, ենթակառուցվածքների կորստի, շրջակա միջավայրին հասցվող վնասների, աղետներից հետո ավելի երկարատև վերականգնման անհրաժեշտության և աղետներից հետո վերականգնմանը հատկացվող ծախսերի աճին: Աղետների էսկալացիան հատկապես ակնհայտ է նահանգի անտառային հրդեհների հարցում: Կալիֆորնիայի պատմության մեջ գրանցված 7 խոշորագույն անտառային հրդեհները տեղի են ունեցել 2018 թվականի SHMP-ի լրամշակումից հետո: Առավել ավերիչ անտառային հրդեհների կեսը, դատելով ավերված կառույցների քանակից, նույնպես տեղի է ունեցել Ծրագրի՝ 2018 թվականի լրամշակման հրատարակումից հետո: Այս ռիսկերի դեմ պայքարելու համար վտանգների հետևանքների մեղմացման միջոցառումների իրականացումը կարևոր նշանակություն ունի առաջիկա տասնամյակներում աղետների նկատմամբ համայնքի դիմակայունությունը ձևավորելու և Կալիֆորնիայի համայնքները պաշտպանելու տեսանկյունից:

SHMP-ՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ՎՏԱՆԳՆԵՐԸ

2023 SHMP-ում ներառված է 34 վտանգ: Այս ընդհանուր թվից 15 բնական վտանգները լիովին գնահատվում են՝ վտանգի տեղակայման նկարագրությամբ, նախորդ դեպքերով, ազդեցության վերլուծությամբ, ապագա իրադարձությունների հավանականությամբ, Նահանգային միջոցների խոցելիությամբ, վտանգի մեղմացման առկա և նոր հնարավորություններով: Պատմականորեն Կալիֆորնիան ամենաշատը տուժել է ջրհեղեղներից, անտառային հրդեհներից և երկրաշարժերից: Կլիմայի փոփոխության հետևանքների պատճառով երաշտը և սաստիկ շոգը 2023 թվականի SHMP լրամշակված հրատարակության մեջ նշվում են որպես կարևոր վտանգներ: Կան 19 այլ հետաքրքրություն ներկայացնող վտանգներ ևս, այդ թվում՝ տեխնածին ծագման վտանգները, որոնց մասին վիճակագրական տվյալներ նույնպես բերված են:

Բնական և այլ վտանգները համադասված են ըստ յուրաքանչյուր վտանգի ազդեցության աստիճանի: SHMP-ի համար կատարված ազդեցության գնահատականը հիմնված է ռիսկի հիմնարար սահմանման վրա. Հավանականություն x Ազդեցություն = Ռիսկ:

Վտանգներից շատերը մեծանում կամ արագանում են կլիմայի փոփոխության ազդեցությամբ պայմանավորված: Կլիմայի փոփոխությունը կշարունակի խորացնել վտանգների հաճախականությունը, մասշտաբը և ինտենսիվությունը ամբողջ Նահանգում: Բնական վտանգի յուրաքանչյուր գնահատման մեջ ներկայացվում է Կալիֆորնիայի փոփոխվող կլիման, ինչպես է կլիմայի փոփոխությունը ազդելու բնական վտանգների վրա, և ինչպես է Նահանգը գործում մարտահրավերներին դիմակայելու համար: Վտանգներին առնչվող բոլոր գլուխներում քննարկվում է նաև Վտանգների ազդեցությունից՝ համայնքների պաշտպանության արդարացի առաջնահերթության (այն է՝ սոցիալապես անպաշտպանի խավի պաշտպանվածության) հարցը:

Բնական ծագման մտահոգիչ վտանգներ	Հետաքրքրություն ներկայացնող այլ վտանգներ
▪ Երկրաշարժ ▪ Գետամերձ, գետերի և գետաբերուկների հեղեղումներ ▪ Սաստիկ շոգ ▪ Սաստիկ ցուրտ կամ սառեցում ▪ Անտառային հրդեհներ ▪ Ուժեղ քամի, մթնորոլտային տեղումներ և փոթորիկ ▪ Ծովի մակարդակի բարձրացում, առափնյա հեղեղումներ և էրոզիա ▪ Սողանքներ, սելավներ և այլ հեղեղումներ ▪ Տեղաշարժեր ▪ Երաշտ ▪ Ցունամի ▪ Ամբարտակ փլվածք ▪ Ջրապատնեշի ճեղքվածք ▪ Ձնահոսք ▪ Գրունտի իջվածք ▪ Հրաբուխ	▪ Քաղաքային շինությունների հրդեհ ▪ Էլեկտրաէներգիայի երկարատև անջատումների այլ հնարավոր պատճառներ ▪ Էլեկտրաէներգիայի անջատումներ բնակչության անվտանգության նկատառումներով (PSPS) ▪ Ահաբեկչական գործողություն ▪ Օդի աղտոտում ▪ Էլեկտրաէներգիայի դեֆիցիտ ▪ Կիբեռ սպառնալիքներ ▪ Ծառերի անկում ▪ Ինվազիվ և վնասակար տեսակներ ▪ Էպիդեմիկ և պանդեմիկ, վարակիչ հիվանդություններ ▪ Քաղաքացիական անկարգություններ ▪ Բնական գազի գազատարի անսարքությամբ պայմանավորված վտանգներ

	▪ Վտանգավոր նյութերի արտանետումներ ▪ Տրանսպորտային դժբախտ պատահարի հետևանքով տեղի ունեցած պայթյուն ▪ Հորատանցքերի փորում և երկրաբանական շերտի խզվածք ▪ Նավթի արտահոսք ▪ Էլեկտրամագնիսական իմպուլսային (EMP) գրոհ ▪ Ռադոլոգիական աղետներ ▪ Գեոմագնիսական փոթորիկ (Տիեզերական եղանակ)

ՎՏԱՆԳՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՎԱՐՉԱՇՐՋԱՆԻ

Կալիֆորնիայում կա 58 վարչաշրջան, 482 քաղաք և ավելի քան 1500 հատուկ շրջան, որոնք իրավասու են մշակելու LHMP-ներ: Վարչաշրջանների կամ քաղաքների խմբերի կողմից կան մշակված բազմակողմ իրավասությամբ բազմաթիվ LHMP-ներ, որոնք ղեկավարվում են: Քաղաքները և հատուկ շրջանները մշակել են նաև եզակի իրավասությամբ բազմաթիվ ծրագրեր: Որևէ շրջանի LHMP-ում առավել հաճախ նշվում են հետևյալ վտանգները.

- Անտառային հրդեհները ճանաչվել են որպես վտանգ 57 վարչաշրջանների կողմից. դրանցից 45 վարչաշրջաններում այն բնորոշել են որպես խիստ մտահոգիչ վտանգ:
- Երկրաշարժը որպես վտանգ է ճանաչվել 57 վարչաշրջանների կողմից. դրանցից 46 վարչաշրջաններում այն բնորոշել են որպես խիստ մտահոգիչ վտանգ:
- Ջրհեղեղը որպես վտանգ է ճանաչվել 57 վարչաշրջանների կողմից. դրանցից 38 վարչաշրջաններում այն բնորոշել են որպես խիստ մտահոգիչ վտանգ:

ՎՏԱՆԳԻ ՄԵՂՄԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Նահանգը մշակել է վտանգների հետևանքների մեղմացման ռազմավարություն՝ մտահոգիչ վտանգներից երկարաժամկետ խոցելիությունը նվազեցնելու կամ վերացնելու համար: Բազմաթիվ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ գործընթացի միջոցով

կազմված ռազմավարությունը սահմանում է նահանգում վտանգի մեղմացման առաջնահերթությունները և աջակցում տեղական ինքնակառավարման մարմիններին LHMP-ների լրամշակման հարցում: Վտանգների հետևանքների մեղմացման ռազմավարությունը, որը ներառում է 92 մեղմացնող գործողություններ, հիմնված է հետևյալ նպատակների վրա, որոնք արտացոլում են նահանգի ներկայիս գերակայությունները.

- **Նպատակ 1.** Զգալիորեն նվազեցնել կյանքին, համայնքի կենսապահովմանը, շրջակա միջավայրին, գույքին և ենթակառուցվածքներին սպառնացող ռիսկերը՝ պլանավորելով և իրականացնելով ամբողջ համայնքի ռիսկերի նվազեցման և դիմացկունության ռազմավարություններ:
- **Նպատակ 2.** Ստեղծել կարողություններ և հնարավորություններ՝ բարձրացնելու աղետներին դիմակայունությունը պատմականորեն բնակչության անապահով խավի, հասանելիության և ֆունկցիոնալ կարիքներ ունեցող անհատների և աղետների ու կլիմայի փոփոխության անհամաչափ ազդեցության տակ գտնվող համայնքների շրջանում:
- **Նպատակ 3.** Ներառել արդարացի համադասման չափանիշները, գործիքները և ռազմավարությունները վտանգի մեղմացման պլանավորման, քաղաքականության, ֆինանսավորման, իրազեկման և իրականացմանն ուղղված բոլոր ջանքերում:
- **Նպատակ 4.** Կիրառել առկա լավագույն գիտական ու հեղինակավոր տվյալները՝ մշակելու, իրականացնելու և սահմանելու առաջնահերթությունն այն նախագծերի, որոնք բարձրացնում են բնական վտանգների և կլիմայի փոփոխության ազդեցությունների նկատմամբ դիմակայունությունը:
- **Նպատակ 5.** Ներառել Մեղմացման սկզբունքները օրենքների, կանոնակարգերի, քաղաքականության և ուղեցույցների մեջ՝ ամբողջ համայնքի համար օգտակար լինելու առումով աջակցելու արդարացի արդյունքներին:
- **Նպատակ 6.** Զգալիորեն նվազեցնել խոչընդոտները ժամանակին, արդյունավետ և օպերատիվ կերպով վտանգի հետևանքների մեղմացման պլանավորման և իրականացման գործողությունների համար:

ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԾՐԱԳԻՐ

Կալիֆորնիան հանձնառություն է ստանձնել շարունակական և համակարգված ջանքեր գործադրելու՝ նպատակ ունենալով նվազեցնել բոլոր վտանգներից բխող ռիսկերը,

պաշտպանել կյանքը և ունեցվածքը, ինչպես նաև ձևավորել առավել դիմակայուն համայնքներ: 2023 թվականի SHMP-ն պատրաստվել է որպես Ընդլայնված ծրագիր, որում արտացոլված է ռիսկերի նվազեցման առավելագույնս բարձր հանձնառությունը: Այս նախաձեռնությանը հավատարիմ՝ Նահանգը ակտիվ առաջատար է համապարփակ, միջդիսցիպլինար միջոցառումների իրականացման գործում: Սույն Ընդլայնված ծրագրի միջոցով Կալիֆորնիան առավելագույն չափով օգտագործում է գործընկերություններն ու ռեսուրսներն ամբողջ համայնքում՝ բարձրացնելու դիմակայունությունը և նվազեցնելու ապագա աղետներով պայմանավորված կորուստների ռիսկը: Խելացի պլանավորման և վտանգների հետևանքների մեղմացման համակարգված գործողությունների և ներդրումների միջոցով Կալիֆորնիայի նահանգը հանձն է առել բոլորի համար դիմակայուն համայնքներ ձևավորել:

ԾՐԱԳՐԻ ՈՐԴԵԳՐՈՒՄՆ ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

FEMA-ի կողմից վերջնական մշակված 2023 թվականի SHMP-ի պայմանական հաստատումից հետո Cal OES-ի տնօրենը, հանդես գալով որպես Նահանգապետի կողմից նշանակված պաշտոնյա, պաշտոնապես ընդունում է SHMP-ն: Տնօրենի կողմից Ծրագրի ընդունման փաստը հավաստող փաստաթուղթ-նամակը փոխանցվում է FEMA-ին՝ հաստատման գործընթացն ամփոփելու համար: Ծրագրի ընդունման նամակը և վերջնական հաստատման նամակը ներառված են սույն «Հիմնական դրույթներ»-ից հետո:

GAVIN NEWSOM
ՆԱՀԱՆԳԱՊԵՏ

NANCY WARD
ՏՆՕՐԵՆ

23 օգոստոսի, 2023 թվական

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԾՐԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Որպես Կալիֆորնիայի նահանգապետի Արտակարգ իրավիճակների ծառայությունների գրասենյակի (Cal OES) տնօրեն և Նահանգապետի լիազոր ներկայացուցիչ՝ ես ուրախ եմ պաշտոնապես ընդունել 2023 թվականի Վտանգների հետևանքների մեղմացման Կալիֆորնիայի նահանգային ծրագիրը (SHMP) Կալիֆորնիա նահանգի համար:

2018 թվականի SHMP-ի հաստատումից և ընդունումից հետո հինգ տարվա ընթացքում Կալիֆորնիայում տեղի են ունեցել նահանգի պատմության մեջ գրանցված ամենամեծ և ամենաավերիչ աղետներից մի քանիսը: Աղետներն ավելի հաճախակի են դառնում ու թողնում են ավելի մեծ հետևանքներ, և ակնկալվում է, որ այս միտումը կաճի նույնիսկ ավելի, քան եղել է վերջին տարիներին: Նահանգի բնակչության շարունակական աճը, գերակշռող կլիմայական փոփոխությունների կանխատեսումների հետ մեկտեղ, պետք է ստիպի, որ Կալիֆորնիայում շարունակեն ավելի ինտենսիվ դարձնել վտանգների հետևանքների մեղմացման միջոցառումներն ու ներդրումներ կատարեն դրանցում, ինչպես նաև միջոցներ ձեռնարկեն ռիսկերը նվազեցնելու և դիմակայուն համայնքների ձևավորումն ապահովելու համար:

2023 թվականի SHMP-ի լրամշակումը շարունակում է բնական և տեխնածին վտանգների հետևանքով առաջացած աղետների ազդեցությունը նվազեցնելու կամ վերացնելու՝ Կալիֆորնիայի հանձնառությունը: Այս լրամշակումը նաև արտացոլում է կլիմայի փոփոխությունների հետևանքների մեղմացման և դրանց հարմարման նահանգային ռազմավարությունների՝ մինչ օրս ամենաընդգրկուն դիրքորոշումներն ու արտացոլում է Կալիֆորնիայի նահանգի բնակչության անապահով խավի պաշտպանության առաջնահերթությունները:

Նահանգից պահանջվում է վերանայել և վերամշակել իր SHMP-ն Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA) կողմից հաստատման համար, որպեսզի ապահովի հետևյալ ֆինանսավորման հնարավորությունների հետ կապված հատկացումների իրավասությունը.

- Դիմակայուն ենթակառուցվածքների և համայնքների կառուցման (BRIC) դրամաշնորհներ
- Հրդեհների կառավարման աջակցության դրամաշնորհներ (FMAG)
- Ջրհեղեղների հետևանքների վերացմանն ուղղված աջակցության ծրագիր (FMA)
- Վտանգների նվազեցման դրամաշնորհային ծրագիր (HMGP)

3650 SCHRIEVER AVENUE, MATHER, CA 95655
(916) 845-8506 TELEPHONE (916) 845-8511 FAX
www.CalOES.ca.gov

- Հետհրդեհային վտանգների նվազեցման դրամաշնորհային ծրագիր
- Նախաաղետային վտանգների մեղմացմանն ուղղված՝ Կոնգրեսի հատկացումներ (LPDM)
- Հանրային աջակցության մշտական աշխատանքային կատեգորիաներ (Կ-Գ կատեգորիաներ)
- Պոտենցիալ մեծ վտանգ պարունակող ամբարտակի վերականգնման (HHPD) դրամաշնորհային ծրագիր.
- Վաղվա օրվա ապահովագրման վարկային հիմնադրամի ծրագիրը:

Բացի այդ, Նահանգն իրավասու է ստանալու FMA ծրագրի շրջանակներում տրամադրվող դրամաշնորհների համար լրացուցիչ դաշնային ծախսերի մասնաբաժինը:

FEMA-ն ևս մեկ անգամ Կալիֆորնիան առանձնացրել է որպես Ընդլայնված հնարավորություններ ունեցող նահանգ՝ ի նշան այն բանի, որ այս նահանգի գործադրած ջանքերը գերազանցում են ստանդարտ պահանջները: Կալիֆորնիան շարունակում է անխաթար հանձնառությամբ գործել երկարաժամկետ ռիսկերի նվազեցման հարցում և մնում է ակտիվ առաջատար՝ համապարփակ, միջդիսցիպլինային համապարփակ վտանգների մեղմացման նահանգային գործունեության իրականացման գործում: Որպես Ընդլայնված հնարավորություններ ունեցող նահանգ՝ Կալիֆորրնիան աղետից հետո ստանում է լրացուցիչ հինգ տոկոս HMGP-ի միջոցներից:

Ընդունելով 2023 թվականի SHMP-ն՝ Կալիֆորնիայի նահանգը համաձայնում է առաջնորդվել բոլոր կիրառելի նահանգային և դաշնային կանոնադրություններով և կանոնակարգերով, ինչպես նախատեսված է 2023 թվականի SHMP-ին կից երաշխիքներում և լրամշակել SHMP-ն առնվազն հինգ տարին մեկ անգամ: Իրականացման, մշտադիտարկման և պետական ու մասնավոր հատվածներում իմաստալից ինտեգրման միջոցով SHMP-ը շարունակում է հոգ տանել այն բանի մասին, որ Կալիֆորնիան լինի առավել ապահով և վտանգների նկատմամբ դիմակայուն:

Հարգանքով,

Nancy Ward

NANCY WARD
ՏՆՕՐԵՆ

U.S. Department of Homeland Security
FEMA Region 9
1111 Broadway, Suite 1200
Oakland, CA 94607

FEMA

30 օգոստոսի, 2023 թվական

Օրիորդ Նենսի ՈՒորդ
Տնօրեն
Արտակարգ իրավիճակների կառավարման Կալիֆորնիայի
նահանգապետի գրասենյակ
3650 Schriever Avenue
Mather, CA 95655

Հղում: Վտանգների հետևանքների մեղմացման Կալիֆորնիայի ծրագրի հաստատում

Հարգելի օրիորդ ՈՒորդ,

Արտակարգ իրավիճակների կառավարման դաշնային գործակալության (FEMA) Տարածաշրջան 9-ը հաստատում է Վտանգների հետևանքների մեղմացման Կալիֆորնիայի համալրված ծրագիրը, որն ուժի մեջ է մտնում 2023 թվականի օգոստոսի 30-ից և գործելու է մինչև 2028 թվականի օգոստոսի 29-ը: Սույն ծրագիրը հաստատված է մեղմացման պլանավորման գործող կանոնակարգերի և քաղաքականության պահանջների համաձայն:[1]

Բացի այդ, այս ծրագիրը բավարարում է անտառային հրդեհների ռիսկերը հաղթահարելու և վտանգի հետևանքների մեղմացման միջոցառումներն իրականացնելու, ինչպես նաև ամբարտակների հետ կապված բոլոր ռիսկերին դիմակայելու պահանջները:

Վտանգի հետևանքների մեղմացման հաստատված նահանգային ծրագիրը FEMA-ի կողմից ոչ անհապաղ օգնության և վտանգի հետևանքների մեղմացման գործընթացին ուղղված՝ հետևյալ ծրագրերից դրամաշնորհներ ստանալու պայման է.

- Հանրային աջակցության կատեգորիաներ C-G (PA C-G)
- Հրդեհների կառավարման աջակցության դրամաշնորհներ (FMAG)
- Վտանգի հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագիր (HMGP)
- Հետհրդեհային վտանգի հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագիր (HMGP-PF)
- Դիմակայուն ենթակառուցվածքների կառուցում և համայնքների ձևավորում (BRIC)
- Ջրհեղեղի հետևանքների մեղմացմանն աջակցություն (FMA)
- Պոտենցիալ մեծ վտանգ պարունակող ամբարտակի վերականգնման (HHPD) դրամաշնորհային ծրագիր.
- Վաղվա օրվա ապահովագրման վարկային հիմնադրամի ծրագիրը (STORM RLF)
- Նախաաղետային վտանգի հետևանքների մեղմացում (PDM)

Վտանգի հետևանքների մեղմացման նահանգային ծրագրի հաստատումը չի երաշխավորում ֆինանսավորումը FEMA-ի որևէ ծրագրի շրջանակներում: Խնդրում ենք վերոնշյալ FEMA ծրագրերի հատուկ դիմումների և իրավասության պահանջների համար ուսումնասիրել FEMA-ի ոչ անհապաղ

[1] Robert T. Stafford Disaster Relief and Emergency Assistance Act (Stafford Act), as amended; the National Flood Insurance Act of 1968, as amended; Title 44 Code of Federal Regulations (CFR) Part 201; and the "Water Infrastructure Improvements for the Nation Act," or the "WIIN Act," on December 16, 2016, which amends the National Dam Safety Program Act (Pub. L. 92-367).

օգնության և վտանգների հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագրի առանձին քաղաքականությունը և/կամ Ֆինանսավորման հնարավորությունների մասին տարեկան ծանուցումը:

Վտանգի հետևանքների մեղմացման նահանգային ծրագրերը պետք է յուրաքանչյուր հինգ տարին մեկ թարմացվեն և նորից ներկայացվեն FEMA Տարածաշրջան 9-ին՝ հաստատման համար: Եթե Ծրագիրը չթարմացվի և չհաստատվի մինչև 2028 թվականի օգոստոսի 29-ը, այն համարվում է ուժը կորցրած, և FEMA-ն միջոցներ չի տրամադրի մինչև մեղմացման ծրագիրը չհաստատվի:

Եթե Ծրագրի հաստատման ժամանակաշրջանի ընթացքում FEMA-ն որոշի, որ նահանգը չի հետևում բոլոր կիրառելի դաշնային կանոնադրություններին և կանոնակարգերին, որոնք գործում են այն ժամանակահատվածներում, որոնց համար նա ֆինանսավորում է ստանում, կամ չի կարողանում կատարել վտանգի հետևանքների մեղմացման պարտավորությունները, այդ դեպքում FEMA-ն կարող է միջոցներ ձեռնարկել այդ անհամապատասխանությունը շտկելու համար (44 CFR §201.3[b][5] և §201.4[c][7]):

FEMA-ն ընդունում է, որ Կալիֆորնիայի նահանգը հանձնառու է վտանգների հետևանքների մեղմացմանն ուղղված լրացուցիչ ջանքեր գործադրելու համար: Համաձայն 322-րդ բաժնի (42 U.S.C. 5165(e))՝ լրացուցիչ HMGP-ի միջոցներից մինչև 20% աղետների համար նախատեսված ընդհանուր իրավասու աջակցության համար, կարող են տրամադրվել վտանգի հետևանքների մեղմացման ինտենսիվ ծրագրեր ունեցող նահանգներին: «Ընդլայնված» սահմանումը վերաբերում է այն նահանգներին, որոնք առաջատար են վտանգի հետևանքների մեղմացման համապարփակ համանահանգային ծրագրի իրականացման գործում, ինչը հանգեցնում է առավել ապահով և կայուն համայնքների ձևավորմանը:

Ծրագրի ավարտի ամսաթվից առնվազն 12 ամիս առաջ FEMA-ն հիշեցում կներկայացնի վտանգի հետևանքների մեղմացման նահանգային հաստատված ծրագիր չունենալու հետևանքների մասին, որը պահանջվում է FEMA-ի ոչ անհապաղ օգնության և վտնգի հետևանքների մեղմացման դրամաշնորհային ծրագրերի համար դիմելու և ֆինանսավորում ստանալու համար: Էջ 1-ում թվարկված ծրագրերից ֆինանսավորում դիմելու և ստանալու համար նահանգը պետք է մինչև հաստատման ժամկետի ավարտը ներկայացնի Ծրագրի հաջորդ լրամշակման նախագիծը և բավարար ժամանակ տրամադրի վերանայման և հաստատման գործընթացին: Սա ներառում է ցանկացած վերանայում, եթե անհրաժեշտ է, և Նահանգի կողմից պաշտոնական ընդունումը FEMA-ի կողմից որոշում կայացնելուց հետո, որ պլանը ստացել է «սպասվող ընդունման ընդունելի» կարգավիճակ:

Մենք անհամբեր սպասում ենք ձեզ հետ աշխատելու՝ սույն Ծրագրի հաստատման ժամանակահատվածում ամեն տարի քննարկելու վտանգի հետևանքների մեղմացման նահանգային ծրագրի կարգավիճակը: Հարցերի դեպքում խնդրում ենք կապվել Քեթրին Լիպիեցկիի, Վտանգի հետևանքների մեղմացման բաժնի տնօրենի հետ (510) 627-7100 հեռախոսահամարով կամ էլփոստով kathryn.lipiecki@fema.dhs.gov հասցեով::

Հարգանքով,

ROBERT J FENTON JR Digitally signed by ROBERT J FENTON JR
Date: 2023.09.05 20:06:45 -10'00'

Ռոբերտ Ֆենտոն
Տարածքային գործերի վարիչ
FEMA Տարածաշրջան 9

Enclosure (1)
State of California Plan Review Tool, dated August 30, 2023

cc: Christina Curry, Chief Deputy Director, CalOES Ryan Buras, Deputy Director, CalOES
Ron Miller, Mitigation Quality Assurance Division Chief, CalOES Robyn Fennig, Planning Division Chief, CalOES
Kathryn Lipiecki, Mitigation Division Director, FEMA Region 9
Alison Kearns, Planning and Implementation Branch Chief, FEMA Region 9